ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/83

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.06.2018թ. թիվ 03/26-3/10603-18 գրությամբ «Երշին նախագիծ» և «Գողթն» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 08.06.2018թ. թիվ 02/16.4/2688-18 և 11.06.2018թ. թիվ 02/16.4/2723-18 գրությունների հիման վրա, 12.06.2018թ. թիվ 03/26-3/10603-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Երշին նախագիծ» և «Գողթն» ՍՊ ընկերություններին (այսուհետ՝ Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գողթն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գողթն» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 18.06.2018թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) «Գողթն» ՍՊԸ-ն մասնակցել է «Երշին նախագիծ» ՍՊԸ-ի հետ կազմելով կոնսորցիում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները՝ կոնսորցիումի հայտը մերժել է, քանի որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Երշին նախագիծ» ՍՊԸ-ն ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գողթն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է եղել ընդամենը մեկ վրիպակ՝ նախկինում կատարված պայմանագրի տուժանքի մասին համաձայնության տարեթվի սխալ նշումը: Այն գնահատող հանձնաժողովի կողմից հայտի մերժման համար հիմք չի համարվել:

«Գողթն» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել «Գողթն» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգին պատշաճ մասնակցություն ունենալու հանգամանքը, ընկերությանը չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

«Գողթն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/83 ընթացակարգի շրջանակներում 15.06.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **«Երշին նախագիծ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Երշին նախագիծ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Երշին նախագիծ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/83 ընթացակարգի շրջանակներում 15.06.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «Երշին նախագիծ» ՍՊԸ-ի մոտ արձանագրվել է ժամկետանց հարկային պարտավորության փաստ, այնինչ ընկերությունն ուներ գերավճար, որից պետք է կատարվեր հաշվանցում: Ընկերությունը համապատասխան հայցվով դիմել է նաև դատարան:

4. **ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2018թ. թիվ 02/16.4/2688-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար 12.04.2018թ. կազմակերպված «ՀՀ ՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի տարածքում «Եռասերունդ երկրապահ» ուսումնամարզական համալիրի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգում առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Երշին նախագիծ» և «Գողթն» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը (այսուհետ՝ Կոնսորցիում):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե Կոնսորցիումի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների

առկայության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ «Երշին նախագիծ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է 373 426 (երեք հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր քսանվեց) ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Կարգի 44-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը մերժել է Կոնսորցիումի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/83 ընթացակարգի շրջանակներում 15.06.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

5. ՍՑ-ԱՄ-2018/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի տարածքում «Եռասերունդ երկրապահ» ուսումնամարզական համալիրի կառուցման նախագծանախահետազոտական աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀՀ ՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 24.04.2018թ. հայտ է ներկայացրել «Երշին նախագիծ» և «Գողթն» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընկերությունները հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել են, որ բավարարում են «ՀՀ ՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 08.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Երշին նախագիծ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 373 426 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2018թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 3-2 արձանագրության 2.1 կետով կայացված որոշմամբ «Երշին նախագիծ» և «Գողթն» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է:

6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.06.2018թ. թիվ 03/26-3/10603-18 գրությունը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 08.06.2018թ. թիվ 02/16.4/2688-18 և 11.06.2018թ. թիվ 02/16.4/2723-18 գրությունները և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի տարածքում «Եռասերունդ երկրապահ» ուսումնամարզական համալիրի կառուցման նախագծանախահետազոտական աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀՀ ՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 24.04.2018թ. հայտ է ներկայացրել «Երշին նախագիծ» և «Գողթն» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Ընկերությունները հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել են, որ բավարարում են «ՀՀ ՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Երշին նախագիծ» և «Գողթն» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 27.04.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Երշին նախագիծ» և «Գողթն» ՍՊ ընկերությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 08.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Երշին նախագիծ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 373 426 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2018թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 3-2 արձանագրության 2.1 կետով կայացված որոշմամբ «Երշին նախագիծ» և «Գողթն» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված մի շարք ընթացակարգերի շրջանակներում 04.06.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/9969-18 և 11.06.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/10506-18 գրություններով դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե մասնակիցների մոտ

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է վերջիններիս գործողությունների և վարքագծի հետևանքով և առկա է արդյոք վերջիններիս մեղքը, թե ստեղծված իրավիճակը պայմանավորված է հարկային մարմնի կողմից ներդրված նոր համակարգի աշխատանքով: ***Եվ արդյոք նույնատիպ հանգամանքներում ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը կարելի է դիտարկել որպես մասնակցի կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարում (հարկային պարտավորությունների խախտում), թե ոչ:***

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Նույն գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը,

բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.05.2018թ. տրամադրված եզրակացության՝ «Երշին նախագիծ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 373 426 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Միևնույն ժամանակ ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, ինչպես նաև համադրելով «Երշին նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի հետ, գտնում եմ, որ «Երշին նախագիծ» ՍՊԸ-ն «ՀՀ ՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրության մեջ մատնանշված պատճառներով, առկա է «Երշին նախագիծ» ՍՊԸ-ի իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն արձանագրվելու իրավիճակը:

Ինչ վերաբերում է կոնսորցիումի մյուս անդամ «Գողթն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերին, ապա վերջինս համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.05.2018թ. տրամադրված եզրակացության, չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, հետևաբար առկա չեն ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.06.2018թ. թիվ 03/26-3/10603-18 գրությամբ՝

1. «Երշին նախագիծ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04722601) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

2. «Գողթն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00010182) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**